ՀՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ «ԴԱՇԻՆՔ» ԹԵՐԹՈՒՄ (1910-1913 ԹԹ.)

ԲՐՈՒՏՅԱՆ Մ. Ա.

Շուրջ 3000 տարվա վաղեմություն ունեցող Իզմիր (Զմյուռնիա)[1] քաղաքը, որ դեռևս հայտնի էր Հոմերոսի հաղորդած տեղեկություններից, կարևոր տնտեսական հանգույց էր Էգեյանի ափերին: Ալեքսանդր Մակեդոնացու օրոք քաղաքը դարձել է Ասիական գավառի քաղաքացիական նստավայրը, ավելի ուշ՝ առաջին քրիստոնյա հաստատություններից մեկը[2]: Թուրքական տիրապետության շրջանում Իզմիրի կարևոր գործառույթներից մեկը Ստամբուլին ցորեն, չամիչ, բուրդ և այլ գյուղմթերքներ մատակարարելն էր: Տարածաշրջանն աստիճանաբար իր ուշադրությունը հրավիրեց օտարերկրացիներին, հատկապես, երբ XVI դարում բուրդը, բրդյա գործվածքներն ու այլ արտադրանքը սկսեցին հրապուրել ֆրանսիացիներին, անգլիացիներին, հոլանդացիներին[3]: Ըստ XVIII դարի եվրոպացի ճանապարհորդ Թավերնիեի՝ Իզմիրի բնակչությունը մոտ էր 90 000-ին, որից 60 000-ը թուրքեր էին, 15 000-ը՝ հույներ, 8 000-ը՝ հայեր, 6-7 000-ը՝ հրեաներ:

Թուրքական տիրապետությունը Իզմիրում սկսվեց 1624 թ.: Արդեն XX դարի սկզբին Իզմիրում 480 000 բնակչություն կար, որից 20 000-ը հայեր էին: Դրանց մեջ էին Պարսկաստանից և Կովկասից, հատկապես Ղարաբաղից եկածները: Հայերը Իզմիրում կարևոր տընտեսական գործունեություն էին ծավալել: Առևտրի և արհեստների մեծ մասը հայերի ձեռքում էր: Նրանք առաջատար դերում էին այգեգործության և գորգաշինության բնագավառներում: Պետրոս Մեծի մի հրովարտակով Իզմիրի հայ վաճառականներից Պետրոս Ապրոն թուրքահայ այլ վաճառականների հետ հրավիրվել էր Ռուսաստան[4]: Նմանատիպ բազում վկայություններ կան հայերի՝ տարածաշրջանում ունեցած կարևոր դերի մասին: Ավելի մեծ դեր ունեին հույները: Սխալ չէ ամերիկացի պատմաբան Դ. Քուաթերի

---

[1] *Քաղաքի անվանումը ստացել է ամազոնուհիներից մեկի՝ Սմյուռնի անունից:*

[2] **Bosworth E.** *Historic Cities of the Islamic World, p. 213.*

[3] *Նույն տեղում, էջ 219: Թուրքական տիրապետությունից հետո քաղաքում թուրք տարրի թվական գերակշռությունը ակնհայտ է դարձել: Դրա մասին են վկայում եվրոպացի ճանապարհորդների հուշերը. օրինակ՝ XVIII դ. անգլիացի ճանապարհորդ Ռիչարդ Փոսոքի վկայությամբ քաղաքում 84 000 թուրքեր կային, 8 000 հույներ, 6 000 հրեաներ, 2 000 հայեր (***Freely J.*** Children of Achilles, N. Y., 2010, p. 194):*

[4] *Կան տվյալներ, որ առաջին գաղթողները եղել են Պալապանյան և Կոստանդյան ընտանիքներից:* **Ծոցիկեան Ս.,** *Արեւմտահայ աշխարհ, Նիւ Եորք, 1947, էջ 209:*

այն կարծիքը, որ Իզմիրը գտնվում է հունական մշակույթի և տնտեսական գերիշխանության ներքո[5]:

Հույների գերիշխող դիրքը չի բացառում նաև թուրքական պատմագիտությունը[6]: Երբ Հունաստանը, սակայն, մտավ պատերազմի մեջ, օսմանյան հույների նկատմամբ սկսվեցին ոչ պաշտոնական բռնաճնշումներ: «Զնական» գործարքների մեջ մտնելով՝ հունական ընկերությունները դառնում են «թուրքական», որպեսզի խուսափեն պետության բռնագրավումներից: Այսպիսի մասնավոր թուրքականացումը, սակայն, կարճ կյանք է ունենում: Հույների ճնշման ներքո օսմանյան հույն արտադրողներին վերադարձնում են իրենց գործարանները. ավելին, նրանք պահանջում են վնասների փոխհատուցում: Տնական պայքարի հետևանքով, ինչպես և օգտվելով I աշխարհամարտում Թուրքիայի կրած պարտությունից, 1920 թ. Իզմիրի հույն ձեռնարկատերերը ստացան ավելի մեծ ինքնիշխանություն, քան նախկինում՝ ազատված լինելով Օսմանյան կառավարչի բյուրոկրատական վերահսկողությունից[7]: Այս գործընթացը, սակայն, երկարատև և դժվարին էր:

«Նոր օսմանները» 1860-70-ական թթ. կայսրության քրիստոնյաների նկատմամբ ծայրաստիճան անհանդուրժող վերաբերմունք դրսևորեցին: Հիմնական պատճառը քրիստոնյաների մղած ազգային-ազատագրական պայքարն էր, որի նկատմամբ նոր օսմանները բացահայտ թշնամական դիրքորոշում ցուցաբերեցին: Դա առավել նկատելի դարձավ Կրետեում 1866-69 թթ. հույների ազգային-ազատագրական պայքարի ժամանակ: «Նոր օսմանները» քննադատում էին կառավարությանը հույների նկատմամբ կիրառված չափազանց «մեղմ» քաղաքականության համար, առաջարկում դիմել «բռնի ուժի մեթոդներին»: Կրետական ճգնաժամի հետ կապված՝ հակահունական ուժեղ շարժում ծավալվեց: Պոլսաբնակ հույները մեղադրվում էին «հակաթուրքական երգեր երգելու մեջ», ուստի Նամըք Քեմալը կառավարությանը կոչ էր անում հույների նկատմամբ պատժիչ միջոցներ կիրառել, վտարել նրանց կայսրությունից[8]: Կապված Կիպրոսի հարցի հետ՝ թուրքերը սկսում են վտարել հույներին կղզիներից և Պոլսից: Հունական ապրանքների նկատմամբ բոյկոտ է սկսվում նախ տնտեսության ոլորտում, որը վերածվում է քաղաքականի: Եթե հավատանք պաշտոնական տվյալներին, ապա բոյկոտը սկսվում է 1913 թ. նոյեմբերից, թեև մամուլի արձագանքներից կարելի է ենթադրել, որ հունական

---

[5] **Quataert D.** *Manufacturing in the Ottoman Empire and Turkey 1500-1950, N. Y., 1994, p. 134.*

[6] *Օրինակ, Հալիլ Ինալջիկը. հեղինակը չի ժխտում հույների գերակշիռ դերը կայսրության տնտեսական կյանքում, մանավանդ Լևանտի առևտրում, Պոլսի և այլ խոշոր քաղաքների արհեստների և առևտրի համակարգում (***Inalcik H.** *An Economic and Social History of the Ottoman Empire, v. 2, 1600-1914, p. 706):*

[7] **Quataert D.** *Manufacturing in the Ottoman Empire and Turkey 1500-1950, N. Y., 1994, p. 134.*

[8] **Սաֆրաստյան Ռ.,** *Օսմանյան կայսրություն. Յեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1879-1920 թթ.), Ե., 2009, էջ 76:*

ապրանքների նկատմամբ տնտեսական բոյկոտը սկսվեց դեռևս 1909 թ. Պոլսում հույն լեբլեբի վաճառողների նկատմամբ կիրառած բռնություններից[9]:

Հույների նկատմամբ սկսված հալածանքները երբեմն թուրքական կառավարությունը ցանկանում էր կոծկել, նշելով, որ դրանք մի խումբ ավազակների ապօրինի գործունեության արդյունք են, որն իրականում մեծ ծավալ ընդգրկող մի երևույթ էր, որը ներառել էր նաև հունաշատ Իզմիրը: Այստեղ տնտեսական հալածանքները սկսվեցին 1910 թվականից: Պաշտոնապես ապրիլի 11-ից հունական ապրանքների դեմ բոյկոտ հայտարարվեց, երբ կրետացի մի խումբ թուրքեր հարձակվեցին հույն առևտրականների վրա, ստիպողաբար փակեցին շատ խանութներ: Կառավարությունը նրանց դեմ իբր խիստ միջոցառումներ կիրառեց ու մի քանի խռովարարների ձերբակալեց: Այս առիթով Թելֆվիք բեյը հայտարարում է. «Կը լսենք, թէ քաղաքիս մէջ պոյքոթաժ յայտարարուած է հելլէնական ապրանքնե-րուն դէմ: Կարգ մը անձեր ուզած են օգուտ քաղել առիթէն: Ժողովուրդը ազատ է պոյքոթ ընել ոնէ ապրանքի դէմ, որովհետև պոյ-քոթ կը նշանակէ առևտրական յարաբերութեանց և աշխատութեան խզում, բայց ոչ թէ հաստատութիւններու և անհատներու իրաւանց բռնաբարում»[10]:

Կառավարության անսպասելի որոշում է համարվում Իզմիրի և առհասարակ թրքաբնակ բոլոր վայրերի գինետների փակումը: Սա առաջին դեպքը չէր, երբ նմանօրինակ հրաման էր արձակվում[11]: Գինետներ էին փակվում, քանի որ տարածաշրջանում գինու մենաշնորհը պատկանում էր հույներին: Սա, փաստորեն, յուրահատուկ մշակված տնտեսական հարվածի մի ավանդական ձև էր, մանավանդ որ այդ հրամանը պաշտոնապես չհայտարարելով, հանկարծակիի բերելով հույներին, ոստիկանները բռնի փակում էին բոլոր խանութները[12]:

Հունական ապրանքների նկատմամբ տնտեսական բոյկոտը ոչ միայն չի ավարտվում, թեև տեղական իշխանության մարմինների հայտարարություններում

---

[9] Սա այն ժամանակն էր, երբ 30 հազար հույներ վտարվել են Հունաստան, Բիւզանդիոն, 21.I.1909:

[10] Դաշինք, 11.IV.1910: Չի բացառվում, որ այս ժամանակ առաջացած խառնաշփոթությունը կապված է հունական ապրանքների նկատմամբ բարձրացված բոյկոտի հետ, որից օգտվում են կառավարության կողմից օժանդակվող և աջակցություն ստացող քրդերը, Դաշինք, 12.IV.1910:

[11] Թուրքական վավերագրերը բազմիցս հիշատակում են գինետներ փակելու հրամանների մասին: Թեև պետությունը պատճառաբանում էր, թե իբր գինու վաճառքը հակառակ է շարիաթի սկզբունքներին, սակայն այն պետական գանձարան լցնելու հիմնական միջոցներից մեկն է եղել: Հակասություն կա պետական վավերագրերում. մի կողմից արգելվում էր գինու ներմուծումը կամ վաճառքը, մյուս կողմից հարկ էր սահմանվում դրա վաճառքի համար: Օրինակ՝ 1573 թ. մի հրո-վարտակում ասվում է. «... որոշ անհավատներ, առանց հարկ վճարելու, սկսել են անօրինական ճանապարհով գինի ներմուծել: Այդ առիթով հատուկ ֆեթվա է արձակվել, նկատի ունենալով որ այդ գործարքը վնաս է պատճառում պետական գանձարանին [տե՛ս **Փափազյան Ավ.**, Թուրքական վավերագրերը Հայաստանի և հայերի մասին (16-19-րդ դարեր)], Ե., 1999, էջ 218:

[12] Դաշինք, 12.IV.1910:

այն իբր չէր էլ եղել[13], այլև շարունակվում է առավել մեծ թափով: Դեռևս հուլիսին շարունակվող տնտեսական բոյկոտը իշխանությունը փորձում է բացատրել, թե իբր դա հասարակ ժողովրդի՝ Կրետեի «պալիկարների» դեմ պայքարի պատասխանն է[14]:

Կարճ ժամանակում տնտեսական բոյկոտն իր ոլորտն է ընդգրկում ոչ միայն գինեգործներին, այլև նավատերերին և կինոտներին[15]: Ավելին, համայնքի ներքին միասնությունը քայքայելու նպատակով թուրքական կառավարությունը օգտագործում է ժամանակաշրջանում առաջացած հույն-բուլղարական հակասությունները[16]: Պոլսի կառավարությունը, որ նպատակ ուներ հելլենական ազդեցությունը թուլացնել երկրում, որոշում է, որ Մակեդոնիայի հունական դպրոց-ներում դասավանդելու են ոչ թե Հունաստանից եկած ուսուցիչները, այլ տեղացի թուրքահպատակները: Հայ հասարակական միտքը քննադատում է թուրքական կառավարության այս քաղաքականությունը, քանի որ որոշումը մի հայտնի չափով վերաբերում էր նաև հայերին «...յիմարութիւն պիտի ըլլար «թրքացում» հարկադրել այպիսի ազգություններու, որոնք թական տեսակէտով այնքան զորաւոր են, որքան Արաբները, Յոյները, Սլավոնները և Հայերը»[17]:

Կայսրության մեջ թվական գերակշռություն ունեցող ոչ մահմեդական տարրի վտարումը երկրից սովորական երևույթ էր. դրանով պետությունը պարբերաբար նվազեցնում էր թվական գերակշիռ այդ տարրը: Այդ նպատակին էր ուղղված 1910 թ. հոկտեմբերի 23-ի որոշումը, համաձայն որի՝ Թուրքիայում ապրուստի միջոց չունեցող հույները պիտի վտարվեին երկրից:

Հնարավոր մերձեցումը կանխելու համար ինչպես դարեր առաջ՝ սկսած Ֆաթիհ Մեհմեդ II-ից, այնպես էլ հիմա կառավարությունը համայնքները ուզում էր աղճատել թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական առումներով՝ սահմանելով կամայական և պետական հարկեր: Հերթական միջոցառումը վերաբերում է 1911 թվականին, երբ հայերի, հույների, հրեաների վրա մյուս հպատակների հետ որոշվում է պետության պաշտպանության համար հզոր նավատորմիղի շինարա-րության նպատակով մի արտասովոր հարկ սահմանել, որ պիտի տային համայնքները հինգ տարում հինգ հավասար մասերով[18]:

Կրետեի ապստամբությունն ընթանում էր հոգուտ հույների, որի պատճառով նրանց հանդեպ ատելությունը վերածվում է ծայրահեղ մի միջոցառման: Իզմիրի բոյկոտաժի

---

[13] Դաշինք, 22.VII.1910: «Παλικάρι» բառը հունարենից թարգմանած նշանակում է քաջ երիտասարդ: Այդպես էին կոչում Օսմանյան կայսրության դեմ պայքարող հույն տղամարդկանց:

[14] Նույն տեղում, ապրիլի 24:

[15] Նույն տեղում, հուլիսի 16:

[16] 1872 թ. ստեղծվում է բուլղարական էքզարխությունը, որով բուլղարական եկեղեցին անջատվեց Կ. Պոլսի պատրիարքարանից և հանդես եկավ որպես ինքնուրույն հոգևոր միավորում, Bakalovpoulos A., Neva JEllhnikhv JIstoriva, Qessalonivkh, 2003, s. 328.

[17] Դաշինք, 9.VII.1910:

[18] Նույն տեղում, 13.X.1911:

ընկերությունը ապրիլի 11-ին պահանջում է, որ պաշտոնանկ արվի վիլայեթի կուսակալը, քանի որ թույլ է տվել Ս. Գեորգ եկեղեցում հունական դրոշ պարզել: Կուսակալը մեղադրում է հունաց հոգևոր առաջնորդ Քրիզոստոմոսին, որը պահանջել էր իր համայնքի իրավունքների վերականգնում ու պաշտպանություն[19]:

Սա մեծ աղմուկ է բարձրացրել, արձագանք ստացել ժամանակի հունական և եվրոպական մամուլում, ուստի հետևանքներից խույս տալու նպատակով կառավարությունը մի հրովարտակ է արձակել, ըստ որի, իբր, Օսմանյան կայսրությունը դեմոկրատական երկիր է, որտեղ յուրաքանչյուր քաղաքացի կարող է պաշտպանել իր իրավունքները: Իշխանությունը «հավատում է Իզմիրի հույների հայրենասիրությանը և հանդուրժող վերաբերմունքին՝ դեպի Օսմանյան կառավարությունը»: Գնահատելի են հայ մամուլի անթաքույց դրժգոհությունն ու հեգնանքը երիտթուրքական վարչակազմի գործունեության և «արդարացի» որոշումների վերաբերյալ: Խոսելով հայ և հույն պատրիարքների՝ պետության տված «առանձնաշնորհումների» մասին, թերթը նկատում է. «Մեզի համար բոլոր այս խնդիրները կը ծառայէ լոկ աւելորդ անգամ մըն ալ համոզուելու, որ Երիտասարդ Թուրք մտայնութիւնը չի փոխուիր, չի բարեփոխուիր հանդեպ Օսմանցիութեան ոչ իսլամ բաղկացուցիչ տարրերուն: Երիտասարդ թուրքերը իրենց դերին մէջ կը մնան, իրենց տարամերժ սկզբունքներուն և նեղ հայեացքներուն վրայ անդրդուելի»[20]:

Դեռևս 1911 թ. կեսերին Իզմիրում հույների նկատմամբ տնտեսական բոյկոտը ոչ միայն չէր ավարտվել, ավելին, այն արդեն իսկ քաղաքական բնույթ սկսեց կրել: Փորձելով Իզմիրը պահել մեկուսացման մեջ՝ արգելվեց դրսից մամուլի և լրատվության այլ միջոցների ներթափանցումը: Մի խումբ թուրքեր հարձակվում են հույն լրագրավաճառների վրա, գրավում, պատռում են աթենական թերթերը, ծեծում հույներին: Նրանք այնուհետև մտնում են աթենական թերթի գործակալություն՝ պատճառաբանելով՝ իբր հույները արգելված թերթեր են ներմուծել, ձերբակալում մի լրագրավաճառի: Հույների շահերի պաշտպան էր հյուպատոսի թարգմանիչը, որի միջնորդությունից հետո տեղական իշխանությունը վստահեցնում է, որ բոյկոտն արդեն իսկ ավարտվել է, թեև «Դաշինքի» վկայությամբ այն շարունակվել է նաև հետագայում[21]: Կիրառված տնտեսական բոյկոտը օսմանյան վարչակարգը օգտագործում էր իր նպատակների համար: Պետությունը պայման է դնում համայնքի առջև՝ ավարտել բոյկոտը, եթե հունական շոգենավային ընկերությունը վճարի սահմանված հարկը: Այստեղ հակասություն է առաջանում. նույն իշխանությունը մերթ հավաստիացնում է, թե բոյկոտ առհասարակ չկա. «Հակահելլէն պոյքոթին վերացած ըլլալու լուրը ճշմարտութենէ զուրկ է», այնուհետև պայմաններ առաջադրում՝ կապված բոյկոտի

[19] Նույն տեղում, 11.IV.1911:
[20] Նույն տեղում, 31.VII.1911:
[21] Նույն տեղում, 9.VII.1911:

ավարտման հետ[22]:

Կարևոր է Իզմիրի հայ համայնքի դիրքորոշումը ստեղծված իրադրության նկատմամբ: Եթե տեղական մամուլը սկզբում ներկայացնում է իրադարձությունները անթաքույց դժգոհությամբ, ապա 1911 թ. սկսած՝ տեղի հայերը բացահայտ գործունեություն են սկսում ծավալել. դուրս են գալիս հաստատած բոյկոտի դեմ՝ գերադասելով հունական ապրանքները. «...Ինչ է եղեր Քլոնարիտիսը, որ պատուական միզիք մը ալ կը հրամցնէ մեզի գերազանց չիրուրօի մը հետ: Ինչ է եղեր Պուտաբէշէը, պոսիթոնը, որոնք մեզեներու այլապես առինքնող ու խանդաղատիչ հեռապատկերով մը կը բացուին մեր առջև...»[23]:

Հույների նկատմամբ բոյկոտը դեռևս չէր ավարտվել, երբ հայերը, 1913 թ. սկսած, բողոքի հանրահավաք են կազմակերպում Վասպուրականում հայերի նկատմամբ կիրառած բռնությունների դեմ: Դա, ըստ երևույթին, միայն Վասպուրականի դեպքերի արձագանքը չէր, քանի որ համայնքը կառավարությունից պահանջում էր իրեն զերծ պահել քուրդ հրոսակախմբերի կամայականություններից, պաշտպանել մարդկային տարրական իրավունքները, իրականացնել սահմանադրության կետերը: Ժողովը որոշում է հայերի այս բողոքի գրությունը ներկայացնել Օսմանյան միջազգային մամուլին, «որ անոնք ալ հաճին իրենց կողմէ արձագանք տալ այս արդար բողոքներուն յանուն սահմանադրութեան և ի սէր օսմանեան ազգերու ներքին համերաշխութեան...»[24]:

Հայկական և հունական մամուլը ցույց է տալիս, որ Օսմանյան կայսրության այս անկյունում էլ երկու ժողովուրդները ապրում են բարիդրացիական հարաբերություններում, փոխօգնության պայմաններում: Հունական թերթերը բազմիցս են արձագանքել հայե- րի նկատմամբ կայսրության կիրառած կամայականություններին: Ի դեպ, կան վկայություններ, որ Աթենքի հունական մամուլը միշտ ջերմորեն է ողջունել Հայաստանի հայրենասերների նախաձեռնությունները զանազան հրապարակումներում, նույնիսկ այն ժամանակ, երբ հայերի թիվը Հունաստանում բավական քիչ էր: Հատկանշական է, որ հայ-հունական հարաբերությունները այս ժամանակաշրջանում սերտ էին ոչ միայն Իզմիրում, այլև Ստամբուլում, Տրապիզոնում և այլուր: Հայ ազատագրական պայքարի համար հեղափոխական կազմակերպություններ ստեղծելու նպատակով հույները օգնում էին հայերին 1890, 1905, 1913 թթ.[25]:

Հելլենական մամուլը վառ գույներով է ներկայացնում հույնե- րի շրջահայացությունը հայ ազգային շարժումների նկատմամբ: Դեռևս մինչև 1909

---

[22] Դեռևս 1910 թ. հունիսի 14-ի հրամանով, ելնելով այն բանից, որ կրետական հարցը Օսմանյան պետությանն ի նպաստ է լուծվում, պաշտոնապես բոյկոտը հայտարարվում է ավարտված (Դաշինք, 1910, հունիսի 14), մինչդեռ մի քանի օր անց տեղացի թուրքերը հայտարարում են, թե շարունակվում է բոյկոտը՝ որպես իրենց խեղճ հայրենակիցների՝ պալիկարների կողմից ճնշումների արձագանք:

[23] Դաշինք, 1.III.1911:

[24] Նույն տեղում, 28.VIII.1912:

[25] **Hassiotis I.** *The Armenian Genocide and the Greeks: Response and Records, 1915-1923, in R. Hovannisyan, The Armenian Genocide, History, Politics and Ethics, N . Y., 2000, p. 130.*

թվականը հույները փորձ կատարեցին իրենց նախաձեռնությամբ և հատուկ ծրագրով վերափոխել հայ-հունական հարաբերությունները Պոլսում և Զմյուռնիայում[26]:

Ինչ վերաբերում է Իզմիրի հայոց բողոքին, ապա հունական թերթերը մեծ ոգևորությամբ են վերաբերում դրան՝ տալով դրական գնահատական: Այս առիթով հունական «Իմերեսիա» թերթը գրում է. «Ամէն Օսմանեան Սահմանադրական կառավարութիւն, և մասնաւորապէս ներկայ կառավարութիւնը, որ այնչափ ոսկեզօծ յայտարարութիւններ ըրաւ հաւասարութեան, բարեկարգութեան և ապահովութեան խոստումներով, պարտաւորութիւն ունի ոչ միայն Հայ ազգութեան նկատմամբ, որ ինչպէս շատ ճշդութեամբ կը հիշուի այդ որոշմնագրի մէջ, մեր երկրին բարեկարգութեան և յառաջադիմութեան մեկ տարրն է, այլ նոյն իսկ յետին քաղաքացիին համար...»[27]:

Հունական «Ամալթիա» թերթը քննադատում է կառավարության անօրինական բռնությունները, հայ ժողովրդին անվանում օրինապաշտ և խաղաղասեր, որը պահանջներ է դնում իր տարրական իրավունքների համար, որ ամրագրված է սահմանադրությունում. «Մէր Հայ եղբայրներու բողոքը պետք չէ որ նկատուի իբրեւ պարզ ու առանձին բողոք մը միայն ցեղի մը, որ վատթարագոյն չարիքներով կը տառապի անօգնական և որոնք առաջ եկած են անպատիժ մնալ քաջալերող մարդասպաններու յարձակումներէն»[28]:

«Տելեղրաֆոսե» թերթը առաջարկում է հույն համայնքին ևս բողոքի ցույց կազմակերպել բռնությունների դեմ, քանի որ Էպիրոսում, Մակեդոնիայում և այլուր հույներն էլ են հարստահարվում և բռնությունների ենթարկվում, դրանք համեմատում է Մուշի, Բիթլիսի, Վանի դեպքերի հետ[29]: Բացահայտ հայամետ դիրքերից է խոսում «Էսիդա» թերթը, որը քննադատում է կառավարության ներկայացրած բարենորոգման ծրագիրը, նշում, որ իթթիհատական կառավարությունը, բացի երկրի ներսում միմյանց նկատմամբ ատելություն սերմանելուց և անվստահության մթնոլորտ ստեղծելուց, ոչինչ չկարողացավ անել: «Էսիդայի» այս մտքերին համամիտ է նաև «Դաշինքը». «...ամէն բանի մէջ քիթերնիդ խոթելով հայրենակիցներու միջև անդունդ մը բանալու աշխատեցաք»[30]:

Բալկանյան պատերազմներում Թուրքիայի պարտությունը հիմք ընդունելով՝ պետությունը սկսում է կայսրության հույներին վտարել երկրից՝ պատճառաբանելով, թե իբր վերջիններս լրտեսությամբ են զբաղված: Կայսրության բազմահազար հույների վտարումը երկրից մեծ հարված կհասցներ երկրի տնտեսությանը: Հայկական մամուլը ևս նշում է, որ տարածաշրջանի, մանավանդ Իզմիրի

[26] **Hassiotis I.** *նշվ. աշխ., էջ 135:*
[27] *Դաշինք, 1.IX.1912:*
[28] *Նույն տեղում, 2.IX.1912:*
[29] *Նույն տեղում:*
[30] *Նույն տեղում, 18.VII.1912:*

տնտեսական կարևոր գործառույթները պատկանում են հույներին. «Առնենք պահ մը Իզմիրը և երևակայենք, թե ինչ պիտի ըլլայ մեր առևտրական հրապարակային վիճակը, երբ Հելլէնները ելլեն, նոյն իսկ ժամանակի մը համար մեր երկրէն»: Հայկական մամուլը բացահայտ քննադատում է թուրքական կառավարության այս անհեռատես քաղաքականությունը[31]*:*

Փաստորեն, Օսմանյան կայսրության որդեգրած քաղաքակա- նությունը՝ աղճատել համայնքները, հնարավորինս թշնամանքի հող ստեղծել դրկից ժողովուրդների միջև, իր նպատակին չէր ծառայում: Իզմիրում հայ-հունական հարաբերությունները թե՛ քաղաքական, թե՛ կրոնական առումներով բարիդրացիական էին: 1919 թ. Պոլսի հույն և հայ պատրիարքները միասնական այսպիսի պահանջ են դնում. «Մենք վերականգնումը կը խնդրենք մեր ազգային տան: Եթե մեր Տէրութիւններու սահմաններուն մէջ կարելի չէ պարփակել բոլոր Յոյներն ու Հայերը, ջերմագին կը փափաքինք որ մեր ժողովուրդները Յոյն կամ Հայ կառավարութեան մը տակ ապրին՝ պարագային համաձայն»[32]*: Հայոց հոգևոր առաջնորդը նշում է, որ հայ-հունական հարաբերությունները չեն սահմանա- փակվում միայն քաղաքական կողմով: Միտում է առաջանում նաև հոգևոր ոլորտում հարաբերությունները կարգավորելու համար*[33]*:*

ОТГОЛОСКИ ЭКОНОМИЧЕСКОГО ГНЕТА ГРЕЧЕСКОЙ ОБЩИНЫ В ГАЗЕТЕ “ДАШИНК” (1910-1913 ГГ.)

БРУТЯН М. А.

Резюме

Период турецкого господства на территории древнейшего греческого города Смирны стал периодом экономического спада и репрессий. Греки занимали господствующее положение в экономике, о чем свидетельствуют и турецкие историки. “Новые османы” осуждали правительство за лояльное отношение к грекам, призывая к применению жестоких, репрессивных мер. В связи с Критским кризисом в Смирне поднялась волна антигреческого движения, коснувшаяся как экономической, так и политической сферы. Издававшаяся в Смирне армянская газета “Дашинк” не преминула откликнуться на эти события. Газета открыто призывала местное армянское население поддержать греческую диаспору.

---

[31] *Նույն տեղում:*

[32] **Զաւեն արք.,** *Պատրիարքական Յուշերս, Գահիրէ, 1947, էջ 315:*

[33] *Նույն տեղում, էջ 316, Bakalopouloç A., նշվ. աշխ., էջ 365:*